ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 25-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

Մինչ նիստի աշխատանքներին անցնելը, ժողովականներն աղոթեցին նորոգ հանգուցյալ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանի հոգու հանգստության համար:

Նիստի ընթացքում քննարկվեցին մի շարք կազմակերպչական հարցեր:

Օրակարգի կարևորագույն հարցերից էր Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման հարցը: Հոբելյանական այս տարեդարձը լրանում է 2003 թվականին և նկատվում որպես հոգևոր վերելքի մի նոր առիթ: Նշանակալի տոնին պատշաճ կերպով նախապատրաստվելու համար ստեղծված է հանձնախումբ, որի ատենապետ նշանակվեց Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանը:

Անդրադառնալով Երուսաղեմի հայոց Պատրիարքության «Պարոն Տեր» կալվածքի խնդրին՝ ԳՀԽ-ը բարձր գնահատեց վերջինիս արդարացի լուծման համար Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և թեմերի գործադրած ջանքերը: Այժմ Իսրայելի կառավարության և Պատրիարքության միջև տարվող բանակցությունները գտել են իրենց լուծումը, և պատրաստվում է համապատասխան համաձայնագիր:

ԳՀԽ-ի նիստի օրակարգում ընդգրկված էին նաև հարցեր Հայ Եկեղեցու կանոնադրության ընդունման, Եպիսկոպոսաց ժողովի հրավիրման և եկեղեցական այլ խնդիրների վերաբերյալ:

Անդրադառնալով հայրենիքի զորացման և վերաշինության գործին Հայ Առաքելական Եկեղեցու մասնակցությանը՝ ԳՀԽ-ը առանձնակի կարևորությամբ ընդգծեց Մայր Եկեղեցու և թեմական կառույցների զորակցության անհրաժեշտությունը «Հայաստան» համահայկական հիմնադրամի աշխատանքներին: Միաժամանակ ԳՀԽ-ը գոհունակություն հայտնեց Հայ Առաքելական Եկեղեցու և ՀՀ կառավարության միջև վերջերս կնքված համաձայնագրի առնչությամբ, ըստ որի հանրակրթական դպրոցներում որպես ծրագրային առարկա ընդգրկված է Հայ Առաքելական Եկեղեցու պատմությունը:

Տեղեկացվեց Անտիոքի և Համայն Արևելքի Ասորի Ուղղափառ Եկեղեցու պետ Ջաքքա Ա Իվաս Պատրիարքի առաջիկա հոկտեմբերին Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարելիք այցի, ինչպես նաև նոյեմբեր ամսին Ամենայն Հայոց Հայրապետի Ավստրալիա հովվապետական այցի մասին:

Նորին Սրբությունը տեղեկացրեց նաև, որ հոկտեմբեր ամսից Վիրահայոց թեմում իբրև թեմակալ առաջնորդ իր պարտականությունների ստանձնմանը կանցնի Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը: Վեհափառ Հայրապետի կողմից ընդունվել է նաև Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակի փոխանորդ Տ. Տարոն եպիսկոպոս Ճերեճյանի հրաժարականը:

Նիստի ավարտին որոշվեց ԳՀԽ-ի ընդլայնված նիստ հրավիրել հոկտեմբերի վերջին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ